

նոնաւոր վաճառականութեան սկսաւ յառաջիմաց և ուսումնասէր Պանտրըմացի մը, Յովհաննէս Յովակիմեան, որ տասներկու տարի Անգղիայի մէջ փորձա՛ռաբար և գը՛րարար գործելէ ետք՝ հրատարակեց ի Փարիզ 1860ին Պասմուքիւնը նախնեաց վաճառականութեան, թարգմանելով զայն իր կիրթ որդիին՝ Գառնիկ Յովակիմեանի՝ աշխատակցութեամբ բաւական կոկիկ ու գրարառակիրթ աշխարհաբառի մը: Այս պատմութեան մէջ կաւանդուին՝ դասական պարզ ոճով մը՝ ճշմարիտ և արդար վաճառականութեան սկիզբներն՝ հին եգիպտացւոց, Երբայեցւոց, Փիւնիկեցւոց, Կարքեցոնացւոց, Յունաց, Հնդկաց և այլոց վաճառական գործունէութեանց վրայ գործնական ու պատմական ծանօթութիւններով: Յովհաննէս Յովակիմեան՝ որ հայ վաճառականներու Պապա Նահապետը կը կոչուէր իր երիտասարդ ժամանակակիցներէն՝ միջոց մը քանի մը զարգացեալներու հետ իմնեց նաև վաճառական ընդարձակ ընկերութիւն մը, որ շատ չտեւեց. իրեն յաջորդեցին իր արժանաւոր որդիքը՝ Գառնիկ և Յովակիմ Յովակիմեան, առաջինն ի Կ. Պոլիս երկրորդն ի Մանչէսթըր:

Այդ միջոցներուն սկսաւ նաև Մուշեան Յարութիւն անուն անձ մը եւրոպական ըզմահրապոյր վաճառականութեան՝ գլխաւորապէս Անգղիայի մառախլապատ Մանչէսթըր քաղաքին մէջ, ամուսնանալով ալ հոն անգղիկ օրիորդի մը հետ. և առեւտրական կարճ յաջողութիւններէ մը ետք՝ նուազեցաւ վատեցաւ և ինկաւ, ինչպէս իրմէն ետք մէկ քանիներու ալ պատահած է այս գժբաղդութիւնը ծանօթ պատճառներով և արտողութիւններով: Իր միջնորդութեամբ գնուած է Մանչէսթըրի Upper Brook փողոցին վրայ Հայոց եկեղեցիին ընդարձակ գետինը, և ինք նոյն եկեղեցւոյն կառուցա-